



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՏՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), մասնակցությամբ Հանձնաժողովի նախագահ Արա Զոհրաբյանի, անդամներ Մանե Կարապետյանի, Քրիստինա Սարգսյանի, Գառնիկ Սաֆարյանի, Հունան Տեր-Վարդանյանի, Սամվել Դիլբանդյանի և Ելիզավետա Դանիելյանի,

հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի շրջանավարտների որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման անհրաժեշտությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 17.09.2014թ. թիվ 26/9-Լ որոշմամբ հաստատված «Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգ»-ի 1.5 և 2.17 կետերի պահանջներով,

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել (սահմանել) 2018 թվականի գարնան որակավորման քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշմամբ սահմանված ժամանակացույցը հրապարակել ՀՀ փաստաբանների պալատի կայքում:

ՀՀ փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
նախագահ՝

Արա Զոհրաբյան

Որոշում N 3/1-Լ
ք. Երևան
14 մարտի 2018թ.

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
որակավորման հանձնաժողովի
14.03.2018թ. N 3/1-Լ որոշման

Հանձնաժողովի նախագահի՝
Արա Զոհրաբյան

**2018 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

1. 2018 թվականի գարնան որակավորման քննություններին մասնակցելու համար դիմումները «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի (**այսուհետ՝ Փաստաբանական դպրոց**) ունկնդիրների (շրջանավարտների) կողմից առձեռն կարող են տրվել մինչև **2018թ. մարտի 22-ը** (ներառյալ) ժամը 10.00-ից մինչև ժամը 18.00-ն (աշխատանքային օրերին):
2. Որակավորման քննություններն անցկացվելու են հետևյալ հասցեում՝ **ք.Երևան, Զաքյան 7-2:**
3. Սահմանված ժամկետում դիմում ներկայացրած ունկնդիրները որակավորման քննություններին մասնակցելու համար պետք է նախապես գրանցվեն ստորև նշված քննությունների օրերին՝ ժամը **09¹⁵-ից** մինչև **09⁴⁵**՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:
4. Որակավորման քննություններն անցկացվելու են՝

Քրեական ուղղվածություն

N	Մոդուլ	Առաջադրանք	ամսաթիվը և ժամը
1.	Դեռնթուլոգիա	4 խնդիրներ	27.03.2018թ., ժամը 10.00
2.	Քրեական	միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կազմել	03.04.2018թ., ժամը 10.00
3.	Քրեական	դատավճռի դեմ վերաքննիչ բողոք կազմել	10.04.2018թ., ժամը 10.00

Քաղաքացիական ուղղվածություն

N	Մոդուլ	Առաջադրանք	ամսաթիվը և ժամը
1.	Դեռնթուլոգիա	4 խնդիրներ	27.03.2018թ., ժամը 10.00
2.	Քաղաքացիական	հայցադիմում կազմել	03.04.2018թ., ժամը 10.00
3.	Քաղաքացիական	վճռի դեմ վերաքննիչ բողոք կազմել	10.04.2018թ., ժամը 10.00